



6 NOV 20

126

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԻԱԾԱՆԸ

ՄՈՍԿՒԱ ՌԶՅԷ

1917

891.99
9-28

891.99

9-28

Ծ Ի Ա Ծ Ա Ն Ը

ԻՐԻԿՆԱՅԻՆ ՔՐՈՋՍ—

ԿԱՐԻՆԷ ՔՈԹԱՆՃԵԱՆԻՆ

Դու իմ վերջին, իրիկնային, աստղային Քույր!...

Կարս, 916 թ. լույիս.

Ես, աստղային մի պօէտ, Լաբիրինթում քո Կապուտ,
քնյր, անցնում եմ, որպէս աստղ, հոգիս—մեռած աստղի փալլ.
այնքան տրտում է հոգիս, բայց միշտ ժպտում է հոգուդ,
որ երազը չըզառնայ Գողգոթայի ծանապարհ...

Մոսկւա, 917 թ. 11.

Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում—
 Թափառում է նա Երկրադարձային Լաբիրինթոսում:

Անցնում է բոլոր ծամփաները սուտ ու անբեր երկրի,—
 որ պայծառ, մաքուր, դարձերից լետոյ,— Քո զրկում բերկրի:

Բայց երբ կըհասնի հոգիս, որպէս սէզ, սրբացած մի հոգի,—
 Մայրամուտային Եզերքը Կապոյտ,—լոյս եզերքը Քո...

916 Թ. Մոսկա.

„Ամէնտի“ գրքից



34285-62

ԾԻԱԾԱՆԸ

1

Լուսամփոփի պէս աղջիկ ասուածամօր աչքերով,
 Թորախառուր, Թափանցիկ մարմինի պէս Էրազի,
 Կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի պէս հոգեթով,
 լուսամփոփի պէս աղջիկ...

Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չըմեռնի իմ հոգին,
 որ չըմարի իմ հոգին քո ակաթէ աչքերում.
 Ես ի՞նչ անեմ, որ մնայ ծիածանը Էրեբգոյն,
 որ չը ցնդի, չըմարի իմ հողու հեռուն...

Լուսամփոփի պէս աղջիկ ասուածամօր աչքերով,
 Թորախառուր, Թափանցիկ մարմինի պէս Էրազի,
 Կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի պէս հոգեթով,
 լուսամփոփի պէս աղջիկ...

Երեք դոյն կայ երազային քո երկրում—
երեք դոյն:
Թափանցիկ են այն դոյները քո երկրում—
քո հողում:

Դու ժպտում ես. քո լուսաւոր աչքերում —
երեք փայլ.—
ու բացում է, կապոյտ աղջիկ, քո հեռուն
լուսավառ:

Եւ տեսնում եմ գդեակներդ երկնահաւայ,
գմբէթներդ սէգ:
Եւ չիշում եմ ոսկեծաղիկ մի ասուպ,
որ ընկաւ երեկ:

Ու լսում եմ, որ իրիկւայ մշուշում,
անձրեկից չեառի,
իրիկնային զանգակներն են կարկաչում
ու կանչում են գոհ:

Եւ տեսնում եմ, որ դաշտերիդ, լճերիդ,
լոյս երկրիդ վրայ—
ահա իջել է անապակ ու վճիտ
մի կապոյտ հիմա:

Ու տեսնում եմ իրիկնային կապոյտում
բըռնկւած կրկին—
գմբէթներիդ երկնապայ ու ժպտուն
խաչերի ոսկին...

Եւ երազի պէս պարուրւում է յանկարծ
երկիրդ իմ հողում.
Չինչ երկիրդ՝ աչքերիդ մէջ—միդամած
իրիկուն...

Երեք ճանաչ, երեք երանդ, երեք դոյն,
 որ անցան—
 քո՛ւր, կապել են քո աչքերում, իմ հողում—
 ծրածան:

ԿԱՊՈՅՏԸ

Կապույտը հողու աղօթանքն է, քոյր,
 Կապույտը—թախիժ.
 Կապույտը—կարօտ թափանցիկ, մաքուր
 ու յստակ, ու ջինջ:

Կապույտը քրոջ աչքերի անհուն
 առաւօտն է թաց:
 Կապույտում հողիս մի հին իրիկուն
 անդօր հեծկլտաց:

Կապույտը ծէդին աղօթքի կանչող
 ղողանջն է դանդի:
 Կապույտը—արցունք, ու կապույտը—ցօղ
 հողու, երկնքի:

Կապույտում անսուտ խօսքեր են հոսում
 երկնքից-երկինք:
 Հողիս— Կապույտի լաբիրինթոսում
 սրբացած կնիք:

Այն, որ չի եղել, որ պէ՛տք է լինի
մանկական սրտում—
հոսում է, որպէս լուսաւոր գինի—
հողու կապոյտում:

34285-62

Արեւից առաջ և ոսկուց առաջ—
տրտում է այնքան.
խմում է հողին բաժակը երազ
այդ կոյս տրամութեան:

Արեւից առաջ, երբ կապոյտը՝ հեզ,
սփրթնած, գունատ—
հիւանդ աղջկայ երազ է կարծես՝
ազօտ, լուսակաթ:

Երբ աստղը՝ մի պահ դառնալով անտես՝
վառւում է յանկարծ:
Երբ տիեզերքը ազօթ է կարծես՝
հողու մէջ հանգած:

Երբ դեռ ոչ մի ծախն չի՝ ընկնում հողու
բաժակի մէջ լուռ:—
Երբ որպէս ուրու դեռ քնած ես դու
կապոյտում մաքուր:



Առաւօտ կանուխ, երբ արեւ չը կայ,
լուռ դգում եմ ես,—
որ լուսեղ հողին քնած աղջկայ
մօտիկ է այնպէս:

Ու լսում եմ ես, լսում եմ միայն,
երազուն-տրտում:
Ժպտում է հողիս անդորր տրտմութեան
գունատ կապոյտում:

Զգում է հողիս շրթերի վրայ՝
անմարմին- դողդոջ—
կապոյտ, երկնագոյն համբոյրը նրա—
լուսաւոր քրոջ:

Քոյր, արցունքները— մաքուր
ղողանջներ են, որ
լղանում են երկնագոյն
զանգ-ալքերը խոր:

Ղողանջներ են—լուսաւոր,—
կոյս թռիչք ու թև,
ղողանջներ են—թևաւոր
ու թեթև, թեթև...

Երբ չը կայիր կարծես դու՝ զգեակում հոգու
անշըշուկ քնած,—
Քոյր, իմ հոգին, աստղային, որպէս նինչը քո—
կապոյտում մնաց:

Պատուհանից զգեակի ես տեսնում էի
երկինքները բիւ:
Նրթերիս մէջ, հոգուս մէջ մի խօսք ունէի.
— Քոյր, քնիւր, քնիւր...

Միայն զգում էի ես՝ լուռ, տրտում այնպէս՝
որ ամեն ինչում—
քո լուսաւոր էութեան հարազատ ու հեղ
կապոյտն է շնչում:

Եւ չըկայիր կարծես դու՝ զգեակում հոգու
անշըշուկ քնած:
— Քոյր, իմ հոգին, աստղային, որպէս նինչը քո—
կապոյտում մնաց:

ՈՍԿԻՆ

Կապույտի մէջ, կապույտի մէջ—արևի ոսկին:
—Քնի՛ր, քնի՛ր, կապոյտ աղջիկ, չըզարթնե՛ս ծէղին:

Կարապները լների մէջ, շրերի վրայ
դեռ քնել են, դեռ նիրհում են. կարթնանան հիմա:

Ու զանգերը զօղանջում են՝ կարկաչուն, հնչուն,—
Փախցրի՛ր ում են աստղերի չուն ու կանչո՛ւմ, կանչում:

Խաչը վանքի, էրզը դանդի — կապույտում վերջին.
—զարթի՛ր, զարթի՛ր, կապոյտ աղջիկ, ու նայի՛ր
խաչին...

Նա ոսկի՛ է, երկինք նետած մի կտոր ոսկի.
Նա—մի երազ, ոսկի՛ միրաժ արթնացած խօսքի:

Ու արևի թեր ահա լների նիրհում
հրդեհում է աստղանկար տրամուլթեան հեռուն...

Ու մարում են, ու մեռնում են այն աստղերը, տե՛ս:
Արթնացել են կարապները ու կանչո՛ւմ են մեզ:

Քոյր, վայրկեանը սրբազան է—բռնկում ու մահ.
Կարապները, որ կանչում են, կը մեռնեն հիմա:

Ու կըմարի խաչը վանքի կապույտում վերջին.
—զարթի՛ր, զարթի՛ր, կապոյտ աղջիկ,—ու նայի՛ր
խաչին...

Արևի ոսկին ի՞նչու է փակում
մեր աչքերը թաց —
էրբ՝ կապույտ երազն արթնացած հոգում՝
նայում ենք յանկարծ:

Երբ բաց ենք անում աչքերըս՝ կապույտ,
աստղային նիրհից, —
որ տեսնենք ոսկու ծիծաղը՝ անփութ
լղացած հրից:

Ի՞նչու է խոցում, ասեղի նման,
ոսկին արևի —
մենաւոր ժամին վերջին՝ արամութեան
վերջին բարևի...

Դու արտում ես, բայց արևի բռնկւած ոսկին
ոսկեղօծել է քո կապույտ, աստղային հոգին:

Ու սիրթնած դէմքի՛դ վրայ — բռնկւող մի վալլ.
այն արև'ն է, այն արև'ն է, աստղային եղբայր!

Դու չէ՞ս ուղում, դու չէ՞ս ուղում արևի ոսկին.
չէ՞ս հաւատում արևի տակ շիկացած հասկին...

Միայն նայի՛ր ու հասկացի՛ր, օ, նայի՛ր ու տե՛ս. —
մի ոսկեզոյն քօղ են հաղել դաշտ անտառ ու սէզ:

Ու լեռնային, երկինք տանող ծիւնածածկ ուղին
հրաժեշտ է տալիս հիմա բիլ մառախուղին...

Եւ ամեն տեղ, ինչպէս և այն լեռնուղու վրայ —
բռնկւել է ժպիտ-ոսկին Արևի — Նրա...

Օ, նայիր ու տես, նայիր ու ժպտա,
 օ, նայիր հեռուն.—
 փառւել է ահա մի ոսկի շղթայ
 քրոշ աչքերում...

Սփրթնած, գունատ կապույտը արդէն
 չքացաւ, չըկալ.
 ժպտուն, ոսկեփայլ փառւում են քո դէմ
 աչքերն աղջկայ:

Շղթան ոսկեգոյն, հրաշքի՜ շղթան
 բռնկւել է, տես:
 Նայիր ու ժպտա, դու ժպտա միայն՝
 արևոտ— ու հեզ...

Եւ թող սուրբ թւա, որպէս կոյս հեռուն
 կապույտ մենութեան—
 արևածագին քրոշ աչքերում
 բռնկւած շղթան...

Օղակ-օղակ, ոսկեգոյն ու հրաշէկ,
 օրօրւում են ալիքները լճերի:
 — Կապույտ նիրհում սպասումը չըմաշէ՛ք.
 Թող արևը մի նոր բախտի լուր բերի:

Ահա ներձակ առաքատները՝ ոսկի
 արևի դէմ հարսների պէս շիկացած՝
 օրօրւելով, նազանքներով, կողք-կողքի—
 նամփայ ընկան դէպի հեռուն ոսկեբաց...

Դէմը, հեռուն, կապուտաչեայ ջրերում,
 ոսկենկար դէմքը արև-արքայի—
 հուր ժպտի ոսկի թերթեր է թափում,
 որ լաստերի նանապարհը զարդարի...

Առաքատները, ոսկեգոյն քօլ հագած,
 արևելեան հարսների պէս նազանուտ,—
 օրօրւելով նամփայ ընկան թևաբաց՝
 դէպի ոսկի հեռատաններն արևոտ...

Հրոտ, հրաշէկ ոսկին արեւի՝
հրդեհւած հողու հովն է երեւի...

Նուր հովը հողու՝ հրդեհւած հիմա—
լեռնային վանքի խաչերի վրայ:

Փարւել է վանքի ոսկեթւ խաչին՝
ժպտալու՝ որպէս համբոյրն առաջին:

Որպէս կարմրութիւնն այն այրող, հրոտ՝
հարսնական դէմքիդ՝ ամօթխած կարօտ...

Որպէս թափանցիկ կարմրութիւնն հոսող՝
այտերիդ վրա՝ ոսկեգոյն մի շող...

Ես հաւատում եմ հասկի շշուկին, խօսքին—
երբ հազել ես արևի թափանցիկ ոսկին:

Հեռաստանները հացի—ոսկեգոյն, ոսկեգոյն:
Դու նայեցիր, ժպտացիր իմ գունատ հողուն:

Աչքերիդ մէջ, հողուս մէջ, քոյր իմ, կար, քոյր իմ, կար՝
ոսկու շշուկ, ոսկու փայլ, ոսկու ճաճանչ ոսկեվառ:

Եւ հոսում էր ոսկեծովի կապուտից դէպի վար՝
արտերի գիրկը բերրի՝ մի հեշտութիւն հրալիտ:

Ու ժպտում էր բռնկւած ոսկին՝ անշէշ ու անփոյթ՝
կապուտ հողուս, աչքերիդ, ու երկնքի՝ մէջ կապուտ:

Եւ հաւատում էի ես հասկերի խօսքին,
ու վառւում էր կապուտում արևի ոսկին...

Արեւը—որպէս մի ոսկի թիթեռ:

Իսկ երկինքը կայ—ու կապույտ է դեռ:

Զնգում են թւերն՝ արնագոյն ու վառ.

այրրւում է նա—ինչո՞ւ, ո՞ւմ համար:

Վառւում են, վառւում կապոյտում անձիր

թւերը նրա ու պսակը հիր:

Ու ճախրում է նա—մի ոսկի թիթեռ:

Իսկ երկինքը կայ—ու կապույտ է դեռ...

Ու թուլացած, ու սիրթնած կրմարի

արեւի ոսկին—

վերջին անգամ եղբրքի մօտ կամարի

բռնկւած կրկին:

Ու կապոյտը՝ արեւի մօտ շիկացած,

վարդագոյն—

քոյր, կրփռի դէմքիդ վրայ—ամօթխած

կարմրութիւն:

Ու կապոյտը, ձուլւած ոսկուն, հեռունքում

կամարի—

քոյր, հոգուս մէջ, աչքերիդ մէջ, երկինքներում

կրմարի...

Ու կրտարածւի մի տրտում մշուշ
մանուշակաղօյն.
կապոյտի, ոսկու տրտմունակ մի յուշ—
խանձրւած հոգում...

Արեւ ժպտաց, երբ կոյս էր հեռուն,
ու զունատ էր դեռ:

Արեւ անցաւ—կապոյտ դաշտերում
մի ոսկի թիթեռ:

Կապոյտը վառւեց, խանձրւեց ոսկում,
արեւ անցաւ.
արեւ—անհուն ու որբ կապոյտում՝
բռնկւած մի ցաւ:

Իջնում է ահա մի տրտում մշուշ
մանուշակաղօյն.—
կապոյտի, ոսկու տրտմունակ վերջուշ՝
խանձրւած հոգում...

ՄԱՆՈՒԺԱԿԱԳՈՅՆ

Կապույտից չեսոյ և ոսկուց չեսոյ,
 քոյր, փուլեց ահա իմ տրտմած հոգում,
 որպէս երազում ապրած երեկոյ—
 մի խամրած մշուշ մանուշակագոյն...

Յիշում եմ հիմա, որ մի իրիկուն,
 ժպտալուց չեսոյ, երբ ոսկի շղթան
 ընկաւ ամօթխած գիրկը լռութեան—
 փուլեց քո դէմքին, իմ արտած հոգում
 մի խամրած մշուշ մանուշակագոյն...

Աչքերիդ վեհտ ու թաց կապոյտում—
 ժպիտը ոսկի.
 մայրամուտային մշուշը տրտում՝
 այտերիդ վրայ,
 և, որպէս շրշուկ չրքաղւած հասկի,
 մեր յոգնած սրտում—
 սպասումը, որ ցրտաբեր քամին
 հիմա կրտուրայ...

Ըստւերներն իջնում ու փարւում էին
 դէմքիդ, իմ հոգուն.
 մթնում էր հեռուն խանձրւած հոգու,
 որպէս իրիկուն.
 երազները, քնիւր, երանդներ էին,
 խամրեցին միգում,—
 խամրեցին, հանգան մայրամուտային
 իրիկնամուտում մանուշակագոյն...

Ու տրտում էին քո աչքերը թաց,
 ու մթնում էին դոյներն իմ հոգում,
 երբ վերջին անգամ տրտօրէն ժպտաց
 դէմքդ մշուշում մանուշակագոյն...

Եւ քո թաց, վեհտ, ցօղոտ աչքերում
 լոյսի ճանաչներ ճախրելով անցան—
 ու բացւեց չանկարժ միգամած հեռուն՝
 քո ջինջ աչքերում—պայծառ ծիածան...

Քնիւր իմ, այն մեռնող արեւն էր—ժպտաց,
 մի վերջին անգամ բռնկեց միգում,
 որ ծիածանէ քո աչքերը թաց
 ու տրտում հոգիս մանուշակագոյն...

✠ Իրիկուն էր: Իրիկնային տրտմութեան
յուշն էր հիւսւում—մայրամուտի մի երազ:
Դու հարազատ ու մօտ էիր ինձ այնքան՝
քո աչքերով իրիկնային, ցօղաթաց...

Քո աչքերի ու երկրնքի կամարում
ճառագայթները, այնքան հեղ, այնքան ջիւնջ,
ճախրում էին, հողեվարում ու մարում՝
համբուրելով ծիածանը ամոքիչ...

Եւ լոյսերը, որ ճախրեցին ու անցան,
իրիկնային ժպիտի մէջ այն վերջին—
անընացած, երազ դարձած սրբացան,
որպէս դէմքը քո լուսաւոր—իմ հողին...

Աղօթքի պէս, երգի պէս
հողիս ճախրեց դաշտերում.
միայն զգում էի ես
քո հմայքն ու քո հեռուն...

Միայն զգում էի, որ
երկինքներում կուսական
բուրնկումները բոլոր
նւաղեցին ու հանգան:

Հաշտութիւն էր ու ներում
քո ժպիտը սրբազան—
քո արցունքոտ աչքերում
անընացած ծիածան...

Քոյր, երազներն այրուեցին ու անցան,
 և շինչ մնաց քո աչքերում, իմ հոգում—
 մի սրբացած, անընչացած ծիածան՝
 վերջին սիրոյ մի լուսաւոր ամոքում:

Ու չիշում եմ առաւօտը դունաթափ,
 ու կապոյտը այն սփրթնած ու անհուն,
 ու չիշում եմ, որ քեզ կանչեց մի կարապ,
 երբ արթնացար արեծաղի զգեսկում...

Ու չիշում եմ ես երկինքը վարդադոյն,
 ոսկի վարդեր, որ բացւեցին ու չըկան...
 Ու չիշում եմ իրիկնային երկնքում
 հրաժեշտը ոսկեժպիտ կարմրութեան...

Ու չիշում եմ հուր արեւ—մի թիթեռ—
 ճախրեց, անցաւ, աննիւթացաւ ու չըկայ.
 իսկ իմ հոգին այնքան յստակ, շինչ է դեռ—
 մի լոյս ժպիտ լուսաժպիտ աղջրկայ...

Իսկ երազներն այրուեցին ու անցան:
 Բայց շինչ մնաց քո աչքերում, իմ հոգում—
 մի սրբացած, անընչացած ծիածան՝
 վերջին սիրոյ մի լուսաւոր ամոքում...

ՀԱՌԺԵՇՏԻ ԵՐԵԿՈՆ

Ձինչ նախըրում են զօղանջները հորիզոնից-հորիզոն.
—ինչ տրտնում է, կապոյտ աղջիկ, հրաժեշտի երեկոն...

Տրամուլթիւն ու լոյս է իջել քո աչքերում, իմ հոգում.
օրհնենք, օրհնենք այս երկրային հրաժեշտի երեկոն...

Եւ թող հալւեն, ձուլւեն, մարւեն իրիկնային կապոյտում
մեր կոյս հոգու իրիկնային սպասումները տրտում:

Եւ զանգերը անըջօրէն, հորիզոնից-հորիզոն,
օրհներգելով թող օրօրեն հրաժեշտի երեկոն...

Դու մօտեցար որպէս քոյր—ու հեռանում ես ահա.
աղօթք դարձած, խնկարոյր—դու հեռանում ես ահա:

Ինչո՞ւ եկար, և ինչո՞ւ անըրջացար ու չըկաս.
հրաժեշտի մի համբոյր—ու հեռանում ես ահա...

Դուցէ սուտ է սէրը այս—հրաժեշտի մի երազ,—
քոյր, յնչ դարձած հեռաւոր, դու հեռանում ես ահա...

Դու գնում ես, բայց հողիս սպասում է քեզ.
—կապոյտ աղջիկ, քոյր իմ հեզ, դու յետ չե՞ս գալու...

Ես ժպտում եմ, որ երկար ճանապարհին չըտրտմես.
հողիս մնաց ճրք ախպէս—դու յետ չե՞ս գալու...

Դու գնում ես, բայց կարծես կայարան եմ եկել ես,
որ հանդիպեմ, քոյր իմ, քեզ,—դու յետ չե՞ս գալու...

Կանցնեն օրերը բոլոր
 և տրտմօրէն խոնարհ, զոհ,—
 այն Կայանը հեռաւոր
 կրհասնենք մի երեկոյ:

Եւ ցուրտ հովը, որպէս քոյր,
 կարօտակէզ ու զթոտ,
 կրհամբուրէ սիրալիր
 մեր աչքերը արցունքոտ:

Եւ զանգերը կարկաչուն,
 հորիզոնից-հորիզոն,
 տրտում կօրհնեն մեր վերջին
 հրաժեշտի երեկոն...

Նաւահանգիստ Պետրովսկ, 916թ.

ՄԱՅՐԱՄՈՒՏԱՅԻՆ
 ԿԱՊՈՅՏԻ ԿԱՐՕՏԸ
 ԳԱԶԷԼՆԵՐ ՍԻՐԱԾ ԱՂԶԸԿԱՅ ՀԱՄԱՐ

ԱՄԷՆՏԻ ԵՐԿՐՈՒՄ՝

Քեզ կը հասնեմ, քոյր իմ, ես— Ամէնտի Երկրում,
երբ յուշ դարձած կը քնես— Ամէնտի Երկրում...

Կը համբուրեմ, ջինջ այնպէս, շրթունքներդ ես,—
կը համբուրեմ, քոյր իմ, քեզ— Ամէնտի Երկրում...

Մեռած աստղի լոյսի պէս, որ ժպտում է մեզ—
դու իմ հարսը կը լինես— Ամէնտի Երկրում...

Ամէնտի— Մայրամուտային, Անդրշիրիմեան եզերք՝ Եզիպտա-
կան միջալոգիայում:

1

Կապոյտ բաժակը հոգեթով դու խմի՛ր
սիրտդ լցւի թող հէքեաթով— դու խմի՛ր:

Իրիկնային երկինքը բիլ թող անվերջ
հոգիդ լցնի կապոյտ կաթով— դու խմի՛ր:

Թող լուռ լինի. անըջալար ու տրտում—
կապոյտ բաժակը հոգեթով դու խմի՛ր:

2

Իմ խօսքերը կարկաչում են կապոյտում,
կարկաչում են ու կանչում են կապոյտում:

Կարօտներ կան, որ անմարմին ու տրտում—
միայն շրշուկ ու հնչիւն են— կապոյտում:

Երազներ կան, որ կարօտներ են միայն,
լճիս կարօտներ, որ կանչում են կապոյտում...

Ո՛ւմ եմ երգում. ի՛նձ թէ քեզ—չըզիտեմ.
Իմ երգում ինձ կըզտնե՞ս—չըզիտեմ:

Թե՞ ես ի՛նձ եմ որոնում, բայց գտնում եմ քեզ.
Կորցըրե՞լ ենք արդեօք մեզ—չըզիտեմ:

Գուցէ ե՛ս եմ՝ քո երգում, գուցէ ինձ ես դու երգում.
Ո՛ւմ ես երգում. ի՛նձ թէ քեզ—չըզիտեմ...

Կայ հողու մէջ ու աշխարհում—մի ոսկի օղակ:
Բռնկում է նա ու մարում—մի ոսկի օղակ...

Ո՛վ չի գտել—ժպտալով, ժպտալով—
անդուլ վազքի ճանապարհում—մի ոսկի օղակ...

Բայց ես ինչո՛ւ, քո՛յր իմ, ինչո՛ւ տրամեցի այնքան,
հրբ բռնկեց քո աչքերում մի ոսկի օղակ...

Դու կապոյտը սիրեցիր—չըզտար,
7 տրդ դարձաւ ձիւնածիր,—չըզտար:

Երկինքներին՝ հեռաւոր, հեռաւոր՝
դու մանկօրէն ժպտացիր—չըզտար:

Կոյր աչքերից՝ աղօթքով, աղօթքով
մի քիչ կապոյտ մուրացիր—չըզտար...

Քո՛յր, զանգերի տխրութեան մի զօղանչ է քո հողին:
Դղեակի մէջ մենութեան—բախտի կանչ է քո հողին:

Եւ մենակ է, քոյր-աղջիկ, այնքան մենակ ու տրտում.
Իրիկնային կապոյտում մի ճաճանչ է քո հողին...

Ո՛ւմ ես կանչում ե ինչո՛ւ. զանգերը ո՛ւմ են կանչում.
Բայց չե՛ս գտնի, քո՛յր-աղջիկ, թող չըկանչէ քո հողին...

Բոլոր խօսքերն իմ երգում—նահանջներ են լոկ:
Կապոյտ միգում—ոսկեղոյն նահանջներ են լոկ:

Քո աչքերից, քո դէմքից, քո լուսեղ երկրից
ճառագայթւած իմ հոգում—նահանջներ են լոկ:

Իմաստ չըկայ, միտք չըկայ խօսքերում այս հին,
բայց ինչո՞ւ են ամորում—նահանջներ են լոկ...

Քոյր, իմ հոգին լուռ ու տարտամ—մի սուներ է լոկ,
դղեակի մէջ քո մենութեան—մի սուներ է լոկ:

Եթէ նայես—կրճանաչես, կրտսնես յանկարծ,
որ ձևերիդ այնքան նման—մի սուներ է լոկ:

Գուցէ ժպտաս, գուցէ տրտմես, երբ զգաս, որ նա—
եղերակա՞ն երկուութեան մի սուներ է լոկ...

Կրօզանչէն օրերը քո—կրմարեն,
կրկարկաչէն —մի երեկոյ կրմարեն:

Ու դօղանչող օրերիդ մէջ երգըւած
երազները քո լուսանձ—կրմարեն:

Յետ կրնայես ու կրճաս կարօտից.
Ճի՛շտ արցունքներ կրճանչեն—կրմարեն...

Մենք չըգիտենք, քոյր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կրտանի.
Եթէ լուռ լինենք, լուռ ու հեզ—կապոյտը ո՞ւր կրտանի:

Նա—տրտմունակ մի կարօտ, նրա տնունը սակայ
ոչ դու գիտես, քոյր, ոչ ես,—կապոյտը ո՞ւր կրտանի...

Կորցրել ենք աշխարհի ճամփաները հին.
Իմ ո՞րք ընկեր, քոյր իմ, մեզ կապոյտը ո՞ւր կրտանի...

Քոյր, զօղանչի պէս ճախրել ու զնալ,
հմայւած ու հեզ—ճախրել ու զնալ...

Երկրնքից-երկինք, իրիկւայ մովում,
անմարմին, անտես—ճախրել ու զնալ...

Դէպի Ամէնտի եղերքը կապուտ—
քոյր, զօղանչի պէս ճախրել ու զնալ...

Ինչ տրտում են զանգերը, քոյր, արա ուտի,—
զանգերը թաց ու ցօղաբոյր մայրամուտի...

Ահա կոյսերը զնում են աղօթելու.
սրգահանդէս, տրտում թափոր մայրամուտի:

Լուսամփոփի պէս կախւել է երկինքը բիւ
հողուս վրայ—օ, սճւրբ անդորր մայրամուտի...

Մահր, գիտե՞ս, մի լուսաւոր առասպել է, քոյր:
Կեանքը այնքան մեղկ ու անդոյն ու անբեր է, քոյր:

Մահր անուշ, անրշալոյս տրտմութիւն ունի.
կեանքը սակայն շաչող, փախչող, անհամբեր է, քոյր:

Կեանքի կանչը անկումների աղդարար է լոկ.
Մահր սակայն Կապուտ երկրի մի բանբեր է, քոյր...

Իրիկուն է, քոյր,—աչքերըդ փակի՛ր,
յողնաբեկ, տխուր,—աչքերըդ փակի՛ր:

Թարթիչներըդ թող չըթարթեն միգում.
միգամած ու խոր աչքերըդ փակի՛ր:

Կոպերիդ տակ թող երազըս թաղեմ.
Իրիկուն է, քոյր,—աչքերըդ փակի՛ր...

† Դիր մատներդ կոյս աչքերիս վրայ,—
հոգեվար հոգուս— աչքերիս վրայ...

Յոգնեցի կապոյտ մշուշից, մովից.
դիր մատներդ լոյս—աչքերիս վրայ...

Մահու պէս քնքուշ դիր մատներդ սուրբ—
խոնշացած, անյոյս աչքերիս վրայ...

Իրիկունը ու կապոյտը կանչեցին, քոյր,—
նամփայ ընկանք ոտաբոպիկ, երկնային քոյր...

Ու զնում ենք դէպի Յաւերժը ամօքիչ.
մահն է թեթեւ, մահն է բարի, անմարմին քոյր...

Յետ չընայես, յետ չընայես թաց աչքերով,
դու իմ վերջին, իրիկնային, աստղայի՜ն քոյր...

Որքան ցաւ կայ, որքան ցաւ կայ ա ս կարօտում իրիկնային,
ինչ աւնչում ենք մի՞թէ կրտայ այս կարօտը իրիկնային...

Թաց աչքերդ հովն է շոյում շիրիմների փափսուկով.
Թաց աչքերի՜դ դուցէ զթայ այս կարօտը իրիկնային...

Հսկումների պահը սուրբ է. ժպտա՛, ժպտա՛, մահացող քոյր,
որ չըհանի քեզ Գողգոթա այս կարօտը իրիկնային...

Թող ապրի հոգին—կապոյտ վանդակում.
կան զանձեր անդին—կապոյտ վանդակում:

Դու—ծարաւ աղչիկ, կապոյտը—գինի.
դու—արբած մի կին —կապոյտ վանդակում:

Ի՞նչ պիտի անես, ի՞նչ պիտի անես,
երբ թափւի գինին կապոյտ վանդակում...

Մարում է հողիս, քոյր, քո աչքերում ու մեռնում է նա:
Մթնում է ահա քո կապոյտ հեռուն—ու մեռնում է նա:

Մեռած, մարած աստղ՝ նա ինչո՞ւ ընկաւ երկինքները քո.
նա ի՞նչու վառւեց երկրի խաւարում—ու մեռնում է նա:

Շողի պէս վերջին, աստղոտ երկնքից ընկած շողի պէս՝
աչքերիդ վնիտ ցօղն է համբուրում ու մեռնում է նա...

Իրիկնային քոյր իմ հեզ, մեռելի՛ պէս դու անցի՛ր,
թող զանդերը օրհներգեն ու օրհնեն քեզ,—դու անցի՛ր:

Վարդէ՛ր թափեմ արծաթէ, արծաթէ աստղեր՝
դիակառքիդ, հողմիդ մէջ, դադաղիդ մէջ,—դու անցի՛ր...

Մահատեսիլ ու անդարձ, օրերիս պէս մի՛ջ դարձած,
անվերադարձ, յամբընթաց, սրգահանդէս դու անցի՛ր...

Կապոյտ կարօտը գուրգուրեմ ու լռեմ.
աղօթք անեմ, խունկեր բուրեմ—ու լռեմ:

Այն կարօտը, որ աչքերդ տւեցին,
քոյր, հողուս մէջ ողջադուրեմ—ու լռեմ:

Այն կարօտով իրիկնային ու անուշ—
բոպիկ ոտքերդ համբուրեմ ու լռեմ...

Շրթունքներիդ հողեփարքն է, քոյր իմ,—հե
աղօթք արա, որ աստղերի մէջ թաղեմ:

Քոյր, շրթունքներդ արեւին չերկարես.
շունչդ սուրայ, որ աստղերի մէջ թաղեմ...

Շրթունքներիդ դիակառքով, քոյր իմ, ես
հողի՛ս սարայ, որ աստղերի մէջ թաղեմ...

Սիրոյ երգի կորած տողն էս հողուս համար,
սո՛ւրբ է կարօտը՝ մոխրագէս հողուս համար:

Դու մէջքդ դարձած ու սրբացած մեռելների
սուգը տօնող տրտում քօղն էս հողուս համար:

Իրիկնային մեռելոցի այս սուրբ պահուն—
հին Կարօտի վերջին դողն էս հողուս համար...

Կը մօտենանք մի իրիկուն Յաւերժական Կապոյտին...
Կըմօտենայ երկրի հեռուն Յաւերժական Կապոյտին...

Վերջին սիրով կրհամբուրեմ քո սաները յողնաբեկ.
դու կըմեռնես՝ նայւածքդ—հեռուն՝ Յաւերժական Կապոյտին...

Եւ մարմինը քո խնկաբոյր—հնամենի խունկեղէզ—
կայրեմ, որպէս զոհաբերում—Յաւերժական Կապոյտին...

Կարս, 916 Թ. Յուլիս,—
Մոսկա, 917 Թ. Փետրւար.



Տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկւա, 1917 թ.

ԳԻՆԸ 75 ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0362049

48813/1

891.99

9-28